ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2026-1-9-Ա

ք. Երևան 12.03.2026թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2026 թվականի մարտի 12-ի նիստում քննարկեց 2025 թվականի հուլիսի 16-ին լիազորված անձ Քրիստինե Սողոմոնյանի կողմից ներկայացված՝ «Էս. սոլուշնս» ՍՊԸ ընկերության (Երևան, Նոր Նորք, Լուքսեմբուրգ նրբ. 1, շ. 7, բն. 20, AM) «PECHOK» (No20242593) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույն կամ նույնատիպ լինելը սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում: Տվյալ դեպքում հայտարկված նիշի գրանցումը ենթակա է մերժման, որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում 30-րդ դասի ապրանքների համար գրանցման հիման վրա պահպանվող ավելի վաղ «ՊԵՉՈ» (Անհատ ձեռնարկատեր Սիրվարդ Բերբերյան, Երևան, Չուխաջյան 16, N 32340, 12.03.2021) համակցված ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» 122-րդ կետի, 130-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման կարող են լինել ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշանները չնայած որ գրված են տարբեր լեզուներով, ունեն ձայնային նմանություն՝ ՊԵՉՈ, Pechok (պեչո(կ), որն էլ կարող է շփոթություն առաջացնել միջին սպառողի շրջանակներում:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը բավարարելու, կրկնական

փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու վերաբերյալ, քանի որ հայտատուն ներկայացրել է նամակ համաձայնագիր հակադրվող ապրանքային նշանի իրավատիրոջ կողմից:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Բողոքարկողի ներկայացուցիչը նույնպես համաձայն էր:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Լիազորված անձ Քրիստինե Սողոմոնյանի կողմից ներկայացված «Էս. սոլուշնս» ՍՊԸ ընկերության «PECHOK» (No20242593) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը բավարարել, կրկնական փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչել և ապրանքային նշանը գրանցել:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ